Սաակ Տարոնցի

ԱՌՅՈՒԾՆԵՐԻ ԵՎ ՑՈՒԼԵՐԻ ԿԵՆԴԱՆԱԿԱՆ ԵՎ ԴԻՑԱԲԱՆԱԿԱՆ ՊԱՏԿԵՐՆԵՐԸ ՈՒՐԱՐՏԱԿԱՆ ԲՐՈՆԶԵ ԳՈՏԻՆԵՐԻ ՊԱՏԿԵՐԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Բանալի բառեր. Ուրարտական, բրոնզե, գոտիներ, առյուծներ, ցուլեր, պատկերներ, պատկերագրություն, սուրբ, կենդանիներ, քաղաքակրթություն, մշակույթ, տաճար, դամբարան, հնագիտություն, վայր, ծիսական, դիցաբանական, մյութոսաբանական, պաշտամունք:

Ուրարտու հնագույն պատմական տերության մշակութային ժառանգությունը չափազանց հարուստ է արվեստաբանական և մշակութային թեմատիկայի առումով: Ուրարտական հոգևոր մշակույթի հոյակապ արտահայտումն է բուն ուրարտական արվեստը իր ուրույն արվեստաբանական կոնցեպցիաների և դրանցից բխող ու ենթադրվող դիցաբանական աշխարհընկալումների դարերով հղկված ու կատարելապես զարգացած համակարգով: Ուրարտական մշակույթում տեղի գտած բազմաթիվ նմուշների զանազան կարգերից, անկասկած, բացառիկ արտառոցությամբ և նշանակությամբ առավելապես աչքի են ընկնում մետաղագործական արտադրանքի արտեֆակտները[1]: Ուրարտական հնագույն նյութական մշակութային ժառանգության մեծագույն մասը կազմող մետաղագործական արվեստի բազում արտեֆակտներից ամենաբազմաթիվ ու ամենալավ պահպանված իրերն են համարվում Ուրարտական բրոնզե գոտիները: Այդ ուրույն, եզակի, հազվագյուտ հնամյա իրերը լայնակի կերպով ճանաչված ու վկայակոչված են աշխարհի լավագույն թանգարաններում և մասնավոր հավաքածուներում, այդպիսով իսկ հանդիսանալով արտասովոր հնամյա իրերի մի կատեգորիա, որը չունի նույնանման կրկնակներ ու նմանակներ հնագույն աշխարհի արվեստի պատմության մեջ իրենց իսկականության և ինքնատիպության բոլոր իմաստներով[2]: Ուրարտական գոտիների վրայի պատկերների առկա տիպերը չափազանց բազմաթիվ են տիպաբանական հատկանիշներով, բազմազան են իրենց բաղկացուցիչ մասերի տեսակներով և զանազան են իրենց բնորոշ մյութոսաբանական գործառույթներով[3]: Ա. Փիլիպոսյանը այդ կապակցությամբ այն կարծիքն է հայտնել, որ բուն Ուրարտական բրոնզե գոտիները ուրարտական տերության պատմության և մշակույթի մասին վկայող արժեքավոր աղբյուրներ են, քանի որ նրանց վրա պատկերված թեմաները, սյուժեները և շարադրանքները ակնառու կերպով վկայում են ուրարտացիների կրոնի, ռազմական ակտիվությունների և սոցիալական կյանքի մասին[4]: Դրանց կերպարների բաղկացական մասերը իրապես որոշակի էին իրենց բնատուր արտահայտչականությամբ և տարբերիչ են իրենց հատկանշական առումային որակավորումներով՝ ցույց տալով այդ մանրակրկիտորեն կերտված մանրամասներով հստակ ու անշփոթելի պատկանելիությունը ուրարտական բրոնզե գոտիների վրա պատկերված <u>մարդկային արարածներին</u>, <u>կիսաաստվածներին</u> և <u>աստվածներին</u>, ինչպես նաև այլազան <u>կենդանիներին, թռչուններին</u> և <u>ձկներին</u> մի այլ յուրահատուկ դասային խմբում:

Ուրարտական բրոնզե գոտիների պատկերագրության մեջ տեղ գտած բազմազան գեղարվեստական արտահայտումների և արվեստաբանական արտացոլումների ամբողջությունը ոչ թե ուրարտ վարպետների ինքնուրույն գեղագիտական որոշումների

---

[1] Տե՛ս Darke, D.; Eastern Turkey – 2-nd Edition, Connecticut USA, The Globe Pequot Press Inc., 2011, p. 323.

[2] Տե՛ս Azarpay, G.; Urartian Art and Artifacts: a Chronological Study, Berkeley and Los Angeles, University of California Press, 1990, p. 2.

[3] Տե՛ս Curtis, J.; "Urartian Bronze Belts"; A Zeitschrift für Assyriologie und Vorderasiatische Archäologie, 1996, 86/1:119.

[4] Տե՛ս Piliposyan, Ashot; An Urartian Bronze Belt; Studi Micenei ed Egeo-Anatolici, vol. 37, 1996, p. 123.

արդյունք է, այլ **խիստ կանոնակարգված, հիերարխիկ դասավորված և աստիճանային առումով դասակարգված պատկերագրային տարրեր:** Ուրարտական բրոնզե գոտիների պատկերագրային համակարգերը կամ էլ Ուրարտական բրոնզե գոտիների **պատկերագրությունը** ինքնին իր կրկնակը չունեցող, միակը իր տեսակում, ուրույն և անփոխարինելի տեղեկատվական աղբյուր է պատմական ուրարտական կրոնի, դիցաբանության, մյութոսաբանության, պաշտամունքային ավանդությունների մասին: Ուրարտական բրոնզե գոտիները և դրանց առկա բեկորային բաղադրամասերը իրենց հարուստ պատկերագրության մեջ համալրում են բուն **ուրարտական կրոնական-պաշտամունքային համակարգի** գրեթե տվյալ պահին հայտնի **բոլոր դիցաբանական-մյութոսաբանական տարրերը:**

Ուրարտական բրոնզե գոտիների պատկերագրության մեջ տվյալ տարրերը կրում են էական ու կենսական նշանակություն, և դրանք կարող են պատկերվել **լրիվ առանձին՝ զուգադրված այլ բաղկացուցիչ տարրերի հետ** պատկերային տարրերի համալիրում, կամ էլ որպես **բաղադրամաս կցված մի այլ բաղադրամասերին կամ բաղդատական մանրամասներին՝** կազմելով մի առանձին մյութոսաբանական կերպար:

Ուրարտական բրոնզե գոտիների **սիմվոլիկ պատկերագրային տարրերը** չափազանց **բազմազան են տիպաբանական առումով, խիստ հիերարխիկ են ըստ նշանակության և տեսակավորված են գործառույթային դասավորվածությամբ**: Այդ հոգևոր առումով էական ու կենսական նշանակություն ունեցող սիմվոլիկ պատկերագրային տարրերը ճանաչվում, զանազանվում ու դասակարգվում **են հատուկ աստիճանային չափերով. երկրորդականից դեպի կարևորը, մանրամասնից դեպի հիմնականը, ամբողջականից դեպի բաղադրականը, պարզից դեպի բարդը, անկենդանից դեպի կենդանականը, բնականից դեպի գերբնականը ու իրականից դեպի երևակայականը**:

Ուրարտական բրոնզե գոտիների պատկերագրության մեջ այնպես, ինչպես և շատ այլ մետաղյա իրերի տեսակներում (օրինակ՝ վահանների, սաղավարտների, և այլնի) **առյուծների** և **ցուլերի** կենդանական կերպարները հիմնականն են կենդանական աշխարհի կերպարների կատեգորիայում: Գ. Ազարփայի կարծիքով առյուծի և ցուլի կերպարների բազմազանությունը և մոտիվային գերակայությունը կենաց ծառի ու աստվածների կերպարների հետ մեկտեղ ուրարտական արվեստի այլազան արտեֆակտների զարդամոտիվներում, նամանավանդ մետաղագործական իրերի արվեստում վառ կերպով վկայում է այն փաստի օգտին, որ այդ կենդանիներին տրվել է յուրահատուկ պաշտամունքային նշանակություն[1]:

Առյուծ – այս յուրահատուկ կենդանին համարվում էր Սուրբ՝ ըստ ուրարտացիների կրոնական հավատալիքների: Առյուծը պաշտվում էր որպես բնության մեջ բոլոր գոյություն ունեցող իրական կենդանիների, **բոլոր գազանների արքան**: Այն՝ որպես արիության, խիզախության, քաջության և վիթխարի ուժի մեծն խորհրդանիշ, առավել հաճախ է պատկերվում ուրարտական արվեստում և նամանավանդ հաճախակի հանդիպում է բրոնզե իրերի և հատկապես գոտիների պատկերագրության մեջ: Ուրարտու պետության ծագման, կայացման ու ծաղկման պատմական ժամանակահատվածում առյուծները ազատ բնակվում էին Անատոլիայի (Փոքր Ասիայի), Հայկական Լեռնաշխարհի և Մերձավոր Արևելքի բնական տարածքներում: Մենք կարող ենք մեզ թույլ տալ առաջ քաշել մի վարկած, համաձայն որի առյուծների մի զգալի քանակություն բռնվել է որսի ժամանակ և ենթարկվել ընտելացմանը: Ուրարտույում, Ասորեստանում և այլ մերձակա երկրներում առյուծի երկրպագումը հասավ պաշտամունքային աստիճանի, և ընտելացված առյուծները պահվում էին որպես ընտելացված ու վարժեցրած կենդանիներ: Առյուծներին վերաբերվող բուն թեմաները չափազանց հանրաճանաչ, հանրամատչելի ու նախընտրելի էին դասվում ուրարտական հասարակության մեջ: Ուրարտական բրոնզե գոտիների իրական կենդանիներից ամենահաճախ պատկերվողը առյուծն էր: Առյուծներին զանազան ոճային մեթոդներով վերագրում էին մարդկային հատկություններ,

[1] Տե՛ս Azarpay, Guitty; Urartian Art and Artifacts – A Chronological Study; University of California Press, Berkeley and Los Angeles, 1968, page 3.

նրանք թողնում էին պաշտպանների, ռազմիկների, մարտիկների, պահապանների, հովանավորների տպավորությունները: Որպես ուրարտացի ազգային ամենակարևոր ու նշանակալից խորհրդանիշներից մեկը՝ առյուծները ամենուրեք սրբացվեցին և ստացան **Սուրբ Կենդանու** պատվավոր կոչումը՝ իրենց արտասովոր և զարմանալի ուժի, զորության, թափի, մոլեգնության և գեղեցկության համար:

Ցուլ – դասվող երկրորդը առյուծից հետո, հնագույն ուրարտացիների համար ցուլը մյուս Սուրբ Կենդանին էր: Նա առյուծի հետ միասին այն իրական կենդանին էր, որն ամենաշատն էր պատկերվում Ուրարտական բրոնզե գոտիների պատկերագրային տեսարաններում: Ցուլի խորհրդանիշը նույնիսկ կարող էր ավելի հին լինել, քանց թե առյուծինը իր ծագմամբ ու պաշտամունքային պատմությամբ: Իր ողջ նկարագրային կերպարով ցուլը կարող էր խորհրդանշել այնպիսի երևույթներ, ինչպիսիքն են կռիվը, մարտն ու պատերազմը, ինչպես նաև դրանց լրիվ հակադիր սոցիալ-հասարակական երևույթները ուրարտացի ժողովրդի գոյատևման պրոցեսում՝ խաղաղ կյանքը, վար ու ցանկը, կյանքի շենացումը և կեցության բարելավումը: Անկասկած, ուրարտական ավանդական պատկերագրության մեջ ցուլը այնպես, ինչպես և առյուծը իր կերպարի արտահայտչականությամբ խորհրդանշում է ուժ, բայց այդ ուժը ոչ թե արտաքին, այլ ավելի շատ ներքին կամ ներքնային բնույթ ունի: Որպես ուրարտացիների կողմից շատ սիրված, երկրպագված ու պաշտված իրական Սուրբ Կենդանի ցուլը ունի իր մեջ դիմացկունության, տոկունության, համառության, աշխատասիրության և խաղաղ շինարարության հակվածության բնատուր որակավորումներ: Ուրարտու մեծն պետության գոյության ժամանակամիջոցում ցուլերը կային ինչպես վայրի, այնպես էլ ընտելացված տեսակներով: Իր բնավորային հատկանիշներով ցուլը դարձավ երկրորդ կարևոր Սուրբ Կենդանի և խաղաղ կյանքի շինարարական ուժի սրբազան խորհրդանիշը:

Առյուծները ու ցուլերը որպես գլխավոր կենդանական կերպարներ: Ուրարտական բրոնզե գոտիների պատկերագրության մեջ նկարագրվել են կենտրոնադիր, նրանց կերպարներին կցվել է մեծագույն կարևորության և, բացի դրանից, դրանք պատկերվել են ավելի հաճախ, քան որևէ այլ առկա կենդանանան կերպարներ: Առյուծների ու ցուլերի հատուկ կերպարների պատկերումը բրոնզե գոտիների վրա ուներ **հատուկ կանոնադրային եղանակներ**. դրանք, որպես էական և կենսական նշանակություն ունեցող **սիմվոլիկ պատկերագրային տարրեր,** պատկերվում են որպես հետևյալ **կատեգորիամիավորներ.**

ա) **լրիվ առանձին կենդանիներ**՝ առանց որևէ այլ կցված բաղադրամասերի կամ կցորդությունների, պատկերվող միայնակ կամ խմբերում, նույն կենդանիների կամ այլ կերպարների հետ, տարբեր տեսարաններում և այլազան կոնտեքստներում, բ) որպես **որսի տեսարանների կարևորագույն կոնտեքստային ֆիգուրներ**՝ երբեմն պատկերված իրական կոնտեքստներում, որոնք ենթադրում են ռեալ իրավիճակներ, որպես որսի տեսարանների անմիջական կենտրոնադիր կերպարներ՝ հետապնդվող ձիավոր մարտակառքերի կողմից, և որոշ օրինակներում, ցուցադրված վիրավորված վիճակում՝ նետը խրված մարմնի իրանի մեջ: Սակայն բուն Ուրարտական գոտիների պատկերագրության մեջ առկա են նաև բազում այլ տեսակի տեսարաններ, որոնցում առյուծները և ցուլերը ոչ միայն որսի տեսարանների մաս են կազմում, այլև ստեղծում են վերացական ենթակոնտեքստի տպավորություն, որում ընդգծվում է այդ վազող, ցատկող, շարժվող և ընթացող կենդանիների **դինամիկան** կամ **շարժականությունը**, գ) որպես **սիմվոլիկ և ծիսական նշանակություն կրող կանգնային հարթակներ** ուրարտական աստվածների, դիցությունների, միաժամանակ մարդակերպ ու կենդանամաս էակների, սֆինքսատիպ երևակայական արարածների ու մարդկային հերոսական կերպարների համար, դ) որպես **իրանի բաղադրամասի էական տարր բարդ կոմպոզիտ** (բաղադրյալ մի քանի կենդանական մասերից) երևակայական **արարածների** կցորդային կառուցվածքներում:

Առյուծները և ցուլերը որպես լրիվ առանձին կենդանիներ: Ուրարտական բրոնզե գոտիների պատկերագրության մեջ ենթարկվում են յուրահատուկ ներկայացուցչական կանոններին, որոնք կարելի է մանրակրկիտորեն դիտարկել զանազան թեմատիկ տեսարանների գեղարվեստական արտահայտումներում: Ձ. Քուրթիսը այդ առիթով նկա-

տել է, որ երբեմն Ուրարտական բրոնզե գոտիների տեսարանները բաժանված են հորիզոնական կաղապարների, որտեղ տարբեր կերպարների շարանները կարող են զատված լինել իրարից հատուկ դաջված կողիկներով: Սակայն, շարունակում է նա, երբեմն էլ հնարավոր է, որ դաջված կողիկները բացակայեն, բայց որպես զուտ կանոն Ուրարտական բրոնզե գոտիներում եղած նույնային տարրական կերպարները լինում են նպատակայնորեն դասավորված և դիրքավորված յուրահատուկ ուղղահայաց և հորիզոնական գծային շարաններով [1]: Դրանց հարդարանքային կառուցվածքներում զգացվում է գոյություն ունեցող միտումը առանձնացնել, զատել և ընդգծել առյուծների և ցուլերի կերպարները առանձնակի կամ խմբով, ինչպես պարզ ուղղահայաց կամ հորիզոնական հարդարանքային դասավորությամբ, այնպես էլ դաջված կողիկների միջոցով: Ռ. Համիլթոնը գոտիների այս գոյություն ունեցող հստակ հարդարանքային միտումի անմիջական կապակցությամբ չափազանց կարևոր նկատառում է անում նշելով, որ հիմնական կերպարները կարող են իրարից առանձնացվել մի կամ մի քանի զարդանախշային մոտիվներով տարածության մեջ ստեղծելով ակներև կերպարային շարանները[2]: Սակայն, չնայած որ հնարավոր է ուշադիր զննել որոշ բրոնզե գոտիների պատկերագրության թեմատիկ տարրերի հարդարանքային դասավորության և դրանց հորինվածքային դիրքավորման եղանակները ու փորձել ամբողջությամբ ըմբռնել ու ընկալել դրանց օրինաչափությունները, այնուամենայնիվ, տվյալ խնդիրը կարող է մնալ ոչ լիովին իրականացված ու անկատար մի քանի ակնհայտ բարդությունների պատճառով: Նախ՝ ամեն մի ու յուրաքանչյուր գոտի ունի իր ունիկալ, երբեմն կրկնակը չունեցող կերպարների ցանկը և հարդարանքային դասավորման եղանակները: Երկրորդը՝ գոտիների քանակության զգալի մասը ամբողջական չէ, դրանք թերի են, ունեն պակասորդային մասեր կամ էլ երբեմնի ամբողջական գոտու ֆրագմենտներ կամ բաղկացուցիչ բեկորներ են: Այս դեպքում էլ հարկավոր է լինում կիրառել վերակազմություն, որը կարող է լինել ճիշտ կամ սխալ, քանի որ կարող է իրականացվել միայն ենթադրյալ եղանակներով և այլ նմուշների հետ տիպաբանական համեմատությամբ: Երրորդը՝ աշխարհում գոյություն ունեցող Ուրարտական բրոնզե գոտիների մեծ մասի մասին ինֆորմացիան սակավ է, թերի և մակերեսային, իսկ մյուս մասը ևս կազմող զգալի քանակություն, բացարձակորեն չուսումնասիրված է, անհայտ ու անհասանելի է հնագիտական ուսումնասիրության համար: Չորրորդ պրոբլեմային հանգամանքը, ինչպես նշել է Ք. Մեթդեպեննինգհենը, ևս լուրջ խնդիր է, այն առումով, որ աշխարհում իմացյալ Ուրարտական բրոնզե գոտիների ընդհանուր քանակը հետզհետե մեծանում է, ինչը հանգում է դրանց հարդարանքային հորինվածքի հնարավոր ոճաբանական ձևերի և պատկերային եղանակների ավելացմանը[3]: Այնուամենայնիվ, եթե մենք մանրամասնորեն զննենք Ուրարտական բրոնզե գոտիների մեզ արդեն հայտնի նմուշները, ապա կարելի է գիտաբանորեն արտաբերել դրանց պատկերագրության մեջ առկա առյուծների և ցուլերի՝ <u>հարդարանքային հորինվածքի զուգադրական եղանակների</u> եթե ոչ բոլոր հնարավոր ձևերը, ապա ամենատիպիկ և տիպաբանական առումով ամենահաճախ հանդիպող տարբերակները: Այդ խնդրի արդյունավետ իրագործման համար մենք կարող ենք հիմնվել ինչպես առավել հայտնի ու արդեն տպագրված Ուրարտական բրոնզե գոտիների նմուշների պատկերագրային եղանակների վրա, այնպես էլ ավելի քիչ հայտնի և նույնիսկ դեռ չտպագրված նմուշների հարդարանքային հորինվածքի զուգադրական եղանակների վրա: Իհարկե, անպայման հարկավոր է հաշվի առնել, որ բրոնզե գոտիների ամբողջական տիպաբանական զանազանման, դասակարգման և արտաբերման պրոցեսը չի կարող իրականացվել միանգամից, դա մի բարդ գիտական պրոցես է, որը պահանջում է երկարատև ժամանակամիջոց և մանրակրկիտ զննման ճիգեր:

---

[1] Տե՛ս Curtis, John; Urartian Bronze Belts; A Zeitschrift für Assyriologie und Vorderasiatische Archäologie, vol. 86, No 1, 1996, page 118.

[2] Տե՛ս Hamilton, R.W.; The Decorated Bronze Strip from Gushchi; Anatolian Studies, vol. 15, 1965, page 43.

[3] Տե՛ս Metdepenninghen Catheline; The Urartian Belts A Reconstruction and the Evidence about Some Urartian Belt- Workshops; Archaeologia iranica et orientalis, page 421.

Այսպիսով՝ Ուրարտական բրոնզե գոտիների պատկերագրության մեջ առյուծների և ցուլերի կենդանական կերպարների հարդարանքային հորինվածքի զուգադրական եղանակները կարող են լինել հետևյալ կերպ. **ա) ուղղահայաց շարանով**, **(տես՝ նկար 1), բ) հորիզոնական շարանով (տես՝ նկար 2)**, **գ) խառը անկանոն շարանով (տես՝ նկար 3),**

դ) քառակուսի զարդանախշային կողիկների մեջ (տես՝ նկար 4), ե) կորաձև, կլորաձև զարդանախշային կողիկների կամ բջիջային կաղապարների մեջ (տես՝ նկար 5):

Առյուծները ու Ցուլերը որպես որսի տեսարանների կարևորագույն կոնտեքստային ֆիգուրներ և Դինամիկայի (Շարժականության) կենդանական ներմարմնավորումներ: Ուրարտական բրոնզե գոտիների վիթխարի բազմության մեջ առյուծների ու ցուլերի պատկերմամբ որսի տեսարանները հարաբերականորեն սակավ են, իսկ դրանց թվին պատկանող որոշ գոտիների պատկերումները նաև թերի են, քանի որ ամբողջական գոտին ներկայումս չի պահպանվել և դրա բեկորի մակերեսի վրա պահպանվել է որսի տեսարանի միայն մի մասը: Այնուամենայնիվ, Ուրարտական գոտիների կամ դրանց բեկորների վրա պատկերված ցանկացած որսի տեսարան, լինի դա ամբողջական կամ էլ մասնակի, ծառայում է որպես արժեքավոր աղբյուր անմիջականորեն վկայող առյուծների ու ցուլերի կերպարների բացառիկ կարևորության մասին, նամանավանդ ինչ վերաբերվում է առկա որսի տեսարաններին և հետևաբար ուրարտական զենքի և ռազմական զորության ցուցադրմանը: Այդ ուրույն ցուցադրումը կամ նաև կարելի է այդպես ասել, ընդգծված և շեշտադրված ցուցադրականությունը ունի յուրահատուկ կոնտեքստային նպատակայնության առավել արտահայտելու ինչպես ուրարտացի զինվորների, ձիավորների, ձիակառքերի ու զենքի նկարագրումները, այդպես էլ առյուծների և ցուլերի դինամիկ պատկերները: Որսորդների և որսի կենդանիների պատկերները, միախառնվելով ուրարտական գոտու բուն պատկերագրության մեջ կազմում են այլազան որսի տեսարաններ տարբեր համադրական և կոմպոզիցիոն որակներով և դրվագային տիպաբանական եղանակներով: Դրանցից չափազանց հազվագյուտ են որսի տեսարանները՝ ներպարփակված զարդանախշային բջիջների, կամ կորաձև, կլորաձև զարդանախշային կողիկների կամ բջիջային կաղապարների մեջ, որտեղ առյուծը նկարագրված է վիզը ետ շուռ տրված և ձիավոր մարտիկի վրա հետադարձ հայացք նետած, իսկ վերևում պատկերված է **Թևավոր Արև-Սկավառակի** սրբազան սիմվոլը – մի սուրբ խորհրդանիշ, որը վերացականացնում և ինչ-որ չափով ծիսականացնում է ամբողջ որսի տեսարանը: Որոշ ամբողջականորեն պահպանված գոտիներ ցուցադրում են որսի տեսարանները լայն ընթացող ուղղահայաց շարանով, որտեղ առյուծների կերպարները հետևում են ձիավորներից հետո և մեջտեղներում առկա են սրբազան բույսծաղիկների զարդանախշային մոտիվները: Զանազան որսի տեսարաններ պատկերող Ուրարտական բրոնզե գոտիների թվում կան նաև բացառիկ նմուշներ, որոնց պատկերագրության մեջ կարելի է գտնել հազվագյուտ կերպարներ – որս անող մյութոսաբանական կոմպոզիտ երևակայական արարածներ՝ պատկերված ձգած նետ ու աղեղով: Սակայն այդ կերպարների հիերարխիկ վերացականության բնույթը պահպանելու նպատակով այդ արարածները չեն պատկերվում առանձնակի կամ առանձին որսի տեսարաններում, այլ միայն հանդիպում են ամբողջական գոտու մակերեսի վրա առկա ընդհանուր տեսարանային կոնտեքստում բոլոր այլ հիերարխիկ կերպարների հետ միասին և կերպարային բազմության թվագրման մեջ:

Բավականին ուշագրավ է նաև այն փաստը, որ երբեմն պատկերված ձիավորների, ձիավոր մարտակառքերի, զինվորների և այլ զինյալ երևակայական արարածների կերպարները նույնությամբ, գրեթե անփոփոխ հանդիպում են ինչպես զանազան որսի տեսարաններում, այնպես էլ բազմազան ընդհանուր ծիսական տեսարաններում կամ ծիսաշարերում: Վերը նշյալ զինված կերպարների **դրվագային նույնականությունը** կամ **կոնտեքստային նմանությունը** ուղղակիորեն մատնանշում է Ուրարտական բրոնզե գոտիներում **Որսի** և **Ռազմի** առկա կոնտեքստային հիերարխիկ տարրերի **Ունիվերսալության բնույթի** մասին, ինչպես նաև գոտիներում առկա **Որսի** և **Ռազմի** տեսարանների **ընդհանրական բնույթի** մասին: Հարկավոր է նաև անպայման նշել, որ Ուրարտական բրոնզե գոտիների բուն պատկերագրության մեջ հազվագյուտ են որսի տեսարաններ՝

կանգնած զինվորների պատկերմամբ, և առավելապես սակավ են որսի տեսարաններ՝ նետահարված և վիրավորված կենդանիների պատկերներով, դրանք այնքան քիչ են, որ ընդամենը թվով մի քանիսն են հասել մեզ: Այդ տեսակի դրվագների սակավությունը Ուրարտական բրոնզե գոտիների արվեստի պատկերագրության մեջ, հավանաբար, պետք է ունենար իր բուն պատճառաբանությունը, որը հարկավոր է փնտրել արվեստաբանական մոտեցումների սահմանված կարգերի զուտ ծիսական, պաշտամունքային, հիերարխիկ կրոնական և դասակարգված մյութոսաբանական կանոնների մեջ: Հավանական է, որ որպես սրբազան ու պաշտված կենդանիներ, բարձր սիմվոլիստական արժեքների խորհրդանիշներ և բնական վեհագույն ուժերի մարմնացումներ, առյուծներն ու ցուլերը ոչ մի հանգամանքում չպիտի պատկերվեին վիրավորված և, հետևաբար, տկար և անօգնական վիճակում: Եվ իրոք, մենք տեսնում ենք, որ Ուրարտական բրոնզե գոտիների գրեթե բոլոր կերպարները պատկերված են <u>դինամիկ եղանակներով</u>. շարժվող, ցատկոց, վազող, սլացող, ընթացող, գնացող ու ամենակարևորը – ժիր, աշխույժ, լի էներգիայով, լեցուն ուժով, եռանդով ու կորովով, այսինքն՝ լցված կենդանությամբ: Նման տեսակի արվեստաբանական մոտեցումը արտահայտում էր որսորդների և որսի կենդանիների աննախադեպ սիմվոլիստական միասնականությունը և մյութոսաբանական ներդաշնակությունը, այդպիսով իսկ դարձնելով որսի տեսարանները ավելի նման ինչ-որ մի խաղի, ծեսի կամ արարի: Ուրարտական բրոնզե գոտիների վրա երբեմն հանդիպում են առյուծների և ցուլերի կերպարները պատկերված <u>ոչ-դինամիկ, կանգուն եղանակներով</u>. նկարագրված որպես վեհ, վիթխարի, հզոր և ուժգին կենդանական պաշտամունքային սիմվոլներ:

Այս կենդանիներին պատկերող տեսարաններում լիովին բացակայում են սպանդի, դաժանության, տառապանքի, արյունահեղության և կյանքի ու մահվան պայքարի պատկերագրային տարրերը, որոնք առատորեն առկա էին Ասորական պատկերաքանդակներում: Այսպիսով՝ մենք ակնհայտորեն կարող ենք տեսնել, որ Ուրարտական գոտիներում առյուծների ու ցուլերի կերպարների պատկերագրության մեջ առավելապես գերակայում են <u>Սիմվոլիզմը</u>, <u>Դինամիզմը (Շարժականությունը)</u>, <u>Անիմիզմը (Կենդանականությունը)</u> և <u>Միֆոլոգիական Հիերարխիկ Հարմոնիան (Մյութոսաբանական Հիերարխիկ Ներդաշնակությունը)</u>:

Ուրարտական բրոնզե գոտիների պատկերագային տեսարաններում **Դինամիկ (Շարժական)** պատկերների գերակայությունը խոսում է ի օգուտ կանխամտածված և կանոնակարգված մշակութային և արվեստաբանական տարբեր լուծումների: Որպես ապացույց կարելի է բերել այն հետաքրքիր փաստը, որ, օրինակ, **ոչ Դինամիկ (ոչ Շարժական)** առյուծների պատկերները ավելի սակավ են, քան **Դինամիկ (Շարժական)** նկարագրումները և սովորաբար, որպես կանոն, անշարժ կամ ուղղակի կանգնած առյուծները պատկերվում են առանձնակի, սակայն լրիվ բացակայում են **Որսի** և **Ռազմի** տեսարաններով պատկերագրային դրվագների մեջ: Ռ. Մերհավը գրում է այն ուշագրավ փաստի մասին, որ Հ. Կելները իր կողմից հրատարակած Ուրարտական բրոնզե գոտիների մեծագույն հավաքածուում առանձնացնում է **Որսի** և դրա հետ կապված **Ռազմի** տեսարաններով նմուշները՝ որպես մի առանձին խումբ, որն ունի իր սեփական, հստակ կարգված նկարագրային կանոններ և էական պատկերագրային տարրեր[1]: Ուրարտական բրոնզե գոտիների արվեստաբանական մոտիվների այդ հիմնարար կանոնները ոչ միայն բնորոշային են ուրարտական արվեստին, այլև հանդիսանում են դրա պատմական-մշակութաբանական նեցուկը: Որպեսզի մենք ավելի լավ հասկանանք այդ կանոնների գործառույթային եղանակները, հարկավոր է ուսումնասիրել մեծ քանակությամբ ուրարտական բրոնզե գոտիներ, որտեղ այս կամ այն եղանակով հանդիպում են **առյուծների** ու **ցուլերի** պատկերները այլազան <u>հորինվածքային, կոնտեքստային ու թեմատիկ-դրվագային կառուցվածքներում</u>. **ա)** <u>**զարդարային-պատկերային պատկերագրությամբ,**</u>

[1] Տե՛ս Merhav, Rivka; Belli, Oktay; Calmeyer, Peter; Kohlmeyer, Kay; Ruder, Arie; Salvini, Mirjo; Seidl, Ursula; Wartke, Ralf-Bernhard; Zahlhaas, Gisela; Kellner, Hans-Jörg - Grouping and Dating of Bronze Belts; Urartu – A Metalworking Center in the First Millenium B.C.E., Jerusalem, Israel Museum, 1991, p. 145.

առանց հատուկ թեմատիկ ընդգծվածության, բ) **որսի տեսարաններում**, գ) **ռազմի կամ պատերազմի տեսարաններում**, դ) **դիցաբանական բնույթի** զանազան պատկերներում, որտեղ առկա են **ծիսական-պաշտամունքային բնույթի** դրվագներ, ե) **աստվա-ծապաշտական ծիսական մյութոսաբանական տեսարաններում**, որտեղ առյուծները և ցուլերը զուտ մյութոսաբանական կոմպոզիտ (բաղադրական) կենդանիներ են այլ կենդանիների և/կամ մարդկային կերպարների բաղադրամասերով:

Ուրարտական բրոնզե գոտիների տեսարաններում առյուծների կամ ցուլերի այս կամ այն պարզ կամ բաղադրյալ կերպարների կոնտեքստային և թեմատիկ-դրվագային կեցվածքի, դերի ու նշանակության մասին հստակ տեղեկություններ ստանալու ու տիպաբանորեն դասակարգելու նպատակով հարկավոր է մանրակրկիտորեն զննել այդ սրբազան կենդանիների բուն դերը ինչպես առկա պատկերների համընդհանուր կոնտեքստում, այնպես էլ առանձնակի եղանակով, որպես առանձին կերպ վերցրած պատկերներ: Հարկավոր է նկատել, որ այդ առումով բավականին հետաքրքրական է Ռ. Չավուշօղլուի կողմից հրատարակված «Ուրարտական գոտիները» գիրքը, որտեղ ոչ միայն մանրամասնորեն նկարագրվում են Ռեզան Հազ թանգարանի հավաքածուի գոտիների մանրամասն նկարագիրները, այլև տրվում են բոլոր առկա նկարագրված գոտիների հատկանշական բաղկացուցիչ տարրերի առանձին նկարային պատկերները[1]: Առանձին էջերում զետեղված այդ վարպետորեն կատարված նկարները թույլ են տալիս մտովի արտաբերել գոտիների վրայի առյուծների ու ցուլերի պատկերները և տիպաբանորեն բաժանել դրանց որոշակի կանոնադրական կարգերի կամ տարրերի կատեգորիաների: Ի միջի այլոց, պետք է նկատառել, որ տվյալ գրքի հետազոտական արդյունքները ուղղակիորեն վերաբերվում են ոչ միայն Ռեզան Հազ թանգարանում պահված բրոնզե գոտիներին մասնավորապես, այլև մնացած բոլոր Ուրարտական բրոնզե գոտիներին ընդհանրապես: Օրինակ այս գրքում պատկերված առյուծների ու ցուլերի կերպարները մենք կարող են տիպաբանորեն բնութագրել, դասակարգել ու բաժանել հետևյալ տարատեսակների. **Առյուծներ**[2] – **Կանգուն, ոչ-Դինամիկ (ոչ-Շարժական).** ա) կանգնած՝ բոլոր չորս թաթերը գետնի մակերեսին հավասար, բ) կանգնած՝ երեք թաթերը գետնին, չորրորդը՝ ճոճվող օդում, գ) կանգնած՝ երեք թաթերը գետնին, չորրորդը՝ հարվածող ձախ կողմից վերևից ներքև, դ) կանգնած՝ գլուխը ետ դարձրած, երեք թաթերը գետնին, չորրորդը ճոճվող օդում, ե) կանգնած՝ գլուխը ետ դարձրած, երկու թաթերը գետնին, մնացած երկուսն էլ՝ ճոճվող օդում, զ) կանգնած՝ գլուխը ետ դարձրած, երկու թաթերը գետնին, երրորդը սլացած առաջ հարվածային դիրքում, իսկ չորրորդը՝ ետադարձ գլխի ուղղությանը զուգահեռ:

Վազող, Սլացող Դինամիկ (Շարժական). ա) վազող՝ մարմինը երկարաձիգ դիրքում, երկու հետևի թաթերը գետնին կպած, մնացած երկուսն էլ համարյա գետնային մակերեսին հավասար մի թեթև բարձրացրած, բ) նույնը՝ երրորդ թաթը գետնից քիչ բարձր, իսկ չորրորդը՝ զուգահեռաբար բարձրացրած, գ) վազող, սլացող և թեթևակի ցատկող առյուծների տիպեր, երկու հետևի թաթերը գետնին ամուր հպված, իսկ մյուս երկուսն էլ՝ գետնի մակերևույթից միջին բարձրության վրա ընդգծված դինամիզմով՝ (շարժականությամբ), դ) վազող, սլացող, ցատկող և դեպի թռիչքային դիրքը ընթացող կերպար, որի երկու հետևի թաթերը գետնի վրա են, իսկ մյուս երկուսը՝ ամենի վերևի դիրքում, ակնհայտորեն ընդգծող հավանականորեն պատրաստվող թռիչքի կամ էլ ակնկալվող հարձակման դիրքավորումը: Այսպիսով՝ նաև տիպաբանական առումով առանձնացան վազող առյուծների երեք տիպերը. ա) երկու առաջին թաթերի ամենացածր կամ ցածրադիր դիրքում, բ) նույնը՝ միջին դիրքում, և վերջապես, գ) նույնը՝ ամենա վերևի կամ վերադիր դիրքում (տե՛ս նկար 9):

---

[1] Տե՛ս Çavuşoğlu, Rafet; Urartian Belts – Rezan Has Museum Urartian Belt Collection; Rezan Has Museum, Istanbul 2014, pages 171-173.

[2] Տե՛ս Çavuşoğlu, Rafet; Urartian Belts – Rezan Has Museum Urartian Belt Collection; Rezan Has Museum, Istanbul 2014, page 171, figures 1-19.

Ցուլեր[1] – **Կանգուն, ոչ-Դինամիկ (ոչ-Շարժական).** ա) չորս ոտքերն էլ գետնի վրա են, գլուխը բարձր, պոզերը ուղղահայաց դեպի վերև, առանց շարժման նշույլների, բ) չորս ոտքերն էլ գետնի վրա են, սակայն իրանը կլանում է դեպի գետին, գլուխը ցցված կռվի դիրքում, պոզերը հորիզոնական դիրքում, առկա է մարտական պատրաստություն, գ) առաջի երկու ոտքերը անկյունաձև հպված գետնին, ցուլը հետադարձ դիրքում՝ առաջի ոտքը հենված գետնին, իսկ երկրորդը անկյունաձև, շեղակի դիրքում, պոզերը ուղղահայաց դեպի վերև, դ) նույնը՝ պոզերը հորիզոնական դիրքում, ակնհայտորեն առկա է մարտական պատրաստություն:

Վազող, Սլացող Դինամիկ (Շարժական). ա) վազող՝ մարմինը երկարաձիգ դիրքում, երկու հետևի ոտքերը գետնին կպած, մնացած երկուսն էլ համարյա հավասար են գետնային մակերեսին՝ մի թեթև բարձրացրած, ցուլի շարժման նշույլը ընդգծվում է պոզերի շեղվածությամբ, բ) նույնը՝ առաջին ոտքերը գետնից մի փոքր ավելի բարձր՝ միջին բարձրության դիրքում, վազքի, սլացման և թեթևակի ցատկելու բուն պրոցեսը ընդգծված է միջին լարվածության աստիճանով, գ) վազող, սլացող, ցատկող և դեպի թռիչքային դիրքը ընթացող ցուլի կերպար, որի երկու հետևի ոտքերը գետնի վրա են, իսկ մյուս երկուսը՝ ամենավերևի դիրքում, ակնհայտորեն ցուցադրող ոչ միայն վազքի և սլացման պրոցեսը, այլև ակներև ընդգծող թռիչքի միտումը:

Գլուխը ետադարձ, շեղակի, կողքային և դեպի ներքև կլանվող ցուլերի տիպերը. ա) առաջի ոտքը հետև, երկրորդ ոտքը ավելի առաջ, երրորդ ոտքը ավելի ներքև ու չորրորդ ոտքը ավելի վերև, գլուխը հետադարձ, բ) նույնը՝ սակայն երրորդ ու չորրորդ ոտքերի միջև տարածությունը ավելի մեծ է, գլուխը հետ դարձված, գ) առաջի երկու ոտքերը իրար կպած, երրորդ ու չորրորդ ոտքերը վեր բարձրացրած օդում, համարյա իրար կպած, գլուխը հետադարձ դիրքում, դ) առաջի և երկրորդ ոտքերը գետնին, առաջինը հետ, երկրորդը առաջ ու շեղակի, երրորդը ու չորրորդը իջեցրած, գլուխը իջեցրած, համարյա գետնի մակերևույթին, ե) առաջի և երկրորդ ոտքերը իրարից հեռու, երրորդ ոտքը ծնկաչոք, չորրորդը՝ առաջնային դիրքում, գլուխը շեղակի, զ) նույնը՝ հակառակ դիրքից, մարմինը ավելի շեղակի ու գլուխը ցածր **(տես՝ նկար 10)**:

Ինչպես ակնհայտորեն երևում է Ռ. Չավուշօղլուի գրքում առկա առյուծների ու ցուլերի առանձին նկարներից, դրանց թաթերի ու ոտքերի դիրքի առումով (ցածրադիր, միջին ու վերադիր) այդ կենդանիների դիրքային տիպաբանական հատկանիշները գրեթե համընկնում են, սակայն ցուլերի պատկերները ցուցաբերում են ավել բարդ դիրքեր և դրանց մոտ գլուխը ետադարձ, շեղակի, կողքային և դեպի ներքև կլանվող տիպերը ավելի բարդ ու բազմազան են՝ կազմելով առանձին տիպաբանական խումբ այն ժամանակ, երբ առյուծների մոտ նույն տեսակի պատկերները կտրուկ կերպով չեն առանձնանում այլ տեսակներից, և կազմում են միայն ենթախումբ: Վերջապես, նույն գրքում առկա են ևս մի տեսակ առյուծների ու ցուլերի յուրահատուկ պատկերներ, որտեղ այդ կենդանիները ոչ թե պատկերված են առանձին վերցրած, այլև որպես միմյանց հակադիր տեղակայված զույգեր:

Առյուծների ու ցուլերի զուգադիր հորինվածքների[2] պատկերված երեք օրինակները ունեն բավականին յուրահատուկ դիրքային գործառույթների բնութագրումներ. ա) **կանգուն, պասիվ, ոչ-շարժական –** ցուլը ձախից, առաջի ոտքը ետևում, երկրորդը առաջ բերված, երրորդ ու չորրորդ ոտքերը զուգահեռ, կիսաչոք, իրանը կիսակռացած վիճակում, գլուխը առաջ բերված ու պոզերը առաջ ցցված հորիզոնական վիճակում – առյուծը կանգնած աջից՝ երեք թաթերը գետնին, չորրորդը բարձրացրած հարվածային դիրքում, բ) **ցատկուն, սլացիկ, վազող –** առյուծը ձախից, հետևի երկու թաթերի դրված զուգահեռ իրար մոտ, գետնին կպած, իսկ առաջնային դիքում երրորդ ու չորրորդ թաթերը օդում, ցատկուն թռիչքի ու հարվածի մտայնությամբ – ցուլը ձախ կողմում, առաջի ոտքը ետևում, իսկ երկրորդը շեղակիորեն դրված առաջ, երրորդ ու չորրորդ

[1] Տե՛ս Çavuşoğlu, Rafet; Urartian Belts – Rezan Has Museum Urartian Belt Collection; Rezan Has Museum, Istanbul 2014, page 172, figures 1-15.
[2] Տե՛ս նույն տեղում, էջ 173, figures 1-3.

ոտքերը իրար զուգահեռ, գետնից մի փոքր-ինչ բարձր, գ) նույն տիպաբանական օրինակը՝ առյուծը ձախից, հետևի երկու թաթերի դրված զուգահեռ իրար մոտ, գետնին կպած, իսկ առաջնային դիքում երրորդ ու չորրորդ թաթերը օդում՝ իրար զուգահեռ, բայց ոչ հարվածային դիրքում – իսկ ցուլը աջից, ուշագրավ կերպով պատկերված է գետնի մակերեսից վեր, ցատկուն թռիչքի մեջ, առաջի երկու ոտքերը իրարից շեղակի, իսկ երրորդ ոտքը կիսով չափ ծալված ու չորրորդը առաջ ընթացող օդի մեջ, նրա գլուխը հորիզոնական դիրքում ու պոզերը ուղղաձիգ՝ ցույց տալով հակառակ կերպարին խոցելու պատրաստակամությունը: Ուրարտական բրոնզե գոտիներում առկա տվյալ պատկերների նկարագրումներից մեզ համար ակնհայտորեն պարզ է դառնում, որ չնայած բազմաթիվ տիպաբանական նմանություններին, այդ յուրահատուկ կենդանական կերպարների պատկերման մեջ կան նաև նշանակալի տարբերություններ պայմանավորված հնագույն ուրարտական պատկերագրության յուրահատուկ կանոնների ու գեղարվեստական ընկալումների արտահայտումներով (տես՝ նկար 11):

<u>Առյուծները ու Ցուլերը որպես կանգնային հարթակներ Ուրարտական Աստվածների, Դիցությունների, Հերոսների ու Երևակայական Արարածների համար</u>: Քանի որ հին ուրարտացիները մեծագույն երկրպագումի, հարգանքի ու հիացման են արժանացրել առյուծներին ու ցուլերին, ինչպես նաև պաշտել նրանց որպես Սուրբ Կենդանիներին, ուստի ուրարտացի վարպետները չէին սահմանափակվում այդ կենդանական կերպարների առանձնակի պատկերումից և կցում էին նրանց այլ սրբազան պատկերներին ու դրվագային տեսարաններին որպես սրբոյն խորհրդանիշներ: Առյուծների ու ցուլերի վրա էին պատկերվում ուրարտական Գերագույն Եռյակի Աստվածները՝ Խալդին, Թեյշեբան ու Շիվինին, ինչպես նաև այլ աստվածները, դիցությունները, պատմական ու մյութոսաբանական հերոսները, և այլն: Սուրբ Կենդանիների, Աստվածների և այլ Դիցությունների այդպիսի զուգորդային պատկերումը արտահայտում էր հնագույն ուրարտացիների այն համոզմունքը, որ Սուրբ Կենդանիների ու Դիցական Կերպարների Օծված Միությունը պիտի ստեղծեր <u>Գերբնական Ուժերի անխախտելի կապն</u> ու ապահովեր <u>Սրբազան Կերպարների սիմվոլիկ միավորումը</u>: Ներկայումս բավականին բարդ խնդիր է խորհրդածելը այն ենթադրյալ հանգամանքի վերաբերյալ, որ ուրարտացիների կողմից հաճախ անցկացվող արարողությունների ու ծիսակատարությունների ժամանակ կային իրական գործողություններ իսկական առյուծների կամ ցուլերի վրա: Ամենայն հավանականությամբ, առյուծների ու ցուլերի կերպարային պատկերումները, որտեղ այդ սրբազան կենդանիները ներկայացվում էին որպես կանգնային հարթակներ գերագույն աստվածների և այլ դիցությունների համար ունեին զուտ ենթադրական և սիմվոլիստական բնույթ: Թե արդյոք իրականում գոյություն են ունեցել ծեսեր և արարողություններ, որտեղ ուրարտացի արքաները, քրմերը կամ մեծապատիվ ուրարտացիները մագլցել են իրական առյուծների կամ ցուլերի վրա, մեզ համար անհայտ է և մինչ այժմ մնում է հանելուկային առեղծված: Առյուծների և ցուլերի կերպարները, որպես սրբազան կենդանիներ համադրվելով այլ դիցական տարրերի հետ, կրում էին իրենց մեջ մեծ սիմվոլիստական նշանակություն: Ուրարտական բրոնզե գոտիների վրա պատկերված առյուծները ու ցուլերը, որպես էական պատկերագրային տարրեր, կրում էին իրենց մեջ հսկայական դիցաբանական և մյութոսաբանական արժեքներ, որոնք հնագույն ուրարտացիների կողմից դիտվում էին որպես սրբազան խորհրդանիշներ ու ծիսական-պաշտամունքային կերպարներ: Դրանց ոճական և տիպաբանական ուսումնասիրությունը ոչ միայն բացառիկ հնարավորություն կստեղծի լավագույն կերպով ուսումնասիրել հնագույն ուրարտացիների աշխարհընկալումների ու դիցաբանական-մյութոսաբանական պատկերացումների ամբողջ համակարգը, այլև մեծագույն ավանդ կհանդիսանա ուրարտագիտական զննումների արդյունքում ձեռք բերված գիտելիքների պաշարների զգալի հարստացման ու այդ գիտական-պատմական ոլորտի նշանակալից առաջընթացի գործում:

Саак Таронци, Животные и мифологические изображения львов и быков в иконографии Урартских бронзовых поясов. Непосредственная тема статьи под названием “Животные и мифологические изображения львов и быков в иконографии Урартских бронзовых поясов” является детальное описание изображений львов и быков в художественной тематике Урартских бронзовых поясов, их своеобразных функций в системе художественных концепций Урартской иконографии, и то специальное символическое осмысление, которое гармонично представляет эстетическо-художественные особенности, изобразительно-тематические отражения и смысловые-идейные принципы этих орнаментально-украшательских и животно-символических элементов. В начале статьи представляются роль и значение изображений львов и быков как священных животных в тематике Урартских бронзовых поясов, а также и как их важных композиционных компонентов и составных элементов дизайна. Затем на приведенных примерах этих иконографических элементов подчеркивается их специфический символизм в мифологическом контексте религиозно-обрядной системы урартского веровательного мировоззрения. В начале идет знакомство с образами львов и быков как простых животных в тематике иконографии Урартских бронзовых поясов, а затем представляются более сложные образы урартской мифологии где предстают священные существа композитного свойства, состоящие из элементов львов и быков, а также других животных и человека (например, крылатых быков и львов служащих как постаменты для урартских божеств). Также здесь показана замечательная и разнообразная типология образов львов и быков на основе текстуальных описаний реальных примеров, изображений и иллюстраций Урартских бронзовых поясов. Непосредственная тема этой статьи будет продолжена и в ряде других статей этой серии, которые будут представлены позже. Мы надеемся, что это конкретная тема и непосредственно связанная с ним более обширная тематика будет более детально раскрыта и получит позитивное текущее развитие аналитических исследований представленного научного материала.

Ключевые слова: **урартскеи бронзовые пояса, львы, быки, изображения, изображения, святые животные, цивилизация, культура, храм, гробница, археология**.

Saak Tarontsi, Animalistic and mythological images of lions and bulls in the iconography of the Urartian bronze belts. The immediate theme of the article entitled "Animals and mythological images of lions and bulls in the iconography of the Urartian bronze belts" is a detailed description of images of lions and bulls in the artistic thematics of the Urartian bronze belts, their peculiar functions in the system of artistic concepts of Urartian iconography, and then a specific symbolic meaningfulness that harmoniously represents the aesthetic-artistic specific features, pictorial-thematic reflections and semantic-ideological principles of these ornamental-ornamental and animal-symbolic elements. At the beginning of the article, the role and significance of images of lions and bulls as sacred animals in the subjects of the Urartian bronze belts and also their important composite components and components of design are presented. Then on the above examples of these iconographic elements, their specific symbolism is emphasized in the mythological context of the religious and ritual system of the Urartian religious worldview. In the beginning, we get acquainted with the images of lions and bulls as simple animals in the iconography of the Urartian bronze belts, and then represent more complex images of Urartian mythology, where sainted beings of a composite character are represented, consisting of elements of lions and bulls, as well as other animals and humans (for example, winged bulls and lions serving as pedestals for Urartian deities). Also here is shown a remarkable and diverse typology of images of lions and bulls on the basis of textual descriptions of real examples, images and illustrations of the Urartian bronze belts. The immediate topic of this article will be continued in a number of other articles in this

series that will be presented later. We hope that this specific topic and the more extensive topics directly related to it will be disclosed in more detail and receive a positive current development of analytical studies of the presented scientific material.

Key words: **Urartian bronze belts, lions, bulls, images, holy animals, civilization, culture, temple, tomb, archeology.**

ՆԿԱՐՆԵՐ

Նկար 1. Ուղղահայաց շարանով ընթացող առյուծների և ցուլերի կերպարները պատկերված Ուրարտական բրոնզե գոտու վրա: **Աղբյուր.** New Timeline Auctions, Մեծ Բրիտանիա, մասնավոր հավաքածուից:

Նկար 2. Հորիզոնական շարանով ընթացող առյուծների և ցուլերի կերպարները պատկերված Ուրարտական բրոնզե գոտու վրա: **Աղբյուր.** Լեիդենի Ազգային Հնագիտական Թանգարան, Հոլանդիա, պահեստային համար – B1992 1/1, չափերը – 10.00 X 35.00 սմ:

Նկար 3. Խառը անկանոն շարանով ընթացող առյուծների և ցուլերի կերպարները պատկերված Ուրարտական բրոնզե գոտու վրա: **Աղբյուր.** Տրամադրվել է Տոկիոյի Հնագույն Արևելքի Թանգարանի կուրատոր և ավագ գիտաշխատող Հիդետոշի Ցումոտոյի կողմից տվյալ ուսումնասիրության համար:



Նկար 4. Կորածև, կլորածև զարդանախշային կողիկների կամ բջիջային կաղապարների մեջ առյուծների և ցուլերի կերպարները պատկերված Ուրարտական բրոնզե գոտու վրա: **Աղբյուր.** Taşyürek, Orhan Aytuğ; Adana bölge müzesindeki urartu kemerleri – The Urartian belts in the Adana regional museum; Adana Eski Eserleri Sevenler Derneği Yay; Donmez, Ankara, 1975, էջ 48, նկար 33:

Նկար 5. Մարտակառքերից ցուլերին նետահարող ձիավորների որսի պատկերները Ուրարտական բրոնզե գոտու բեկորից: **Աղբյուր.** Taşyürek, Orhan Aytuğ; Adana bölge müzesindeki urartu kemerleri – The Urartian belts in the Adana regional museum; Adana Eski Eserleri Sevenler Derneği Yay; Donmez, Ankara, 1975, էջ 51, նկար 41:

Նկար 6. Առյուծներին հետապնդող ձիավորների որսի պատկերները Ուրարտական բրոնզե գոտու բեկորից: **Աղբյուր**. Հարվարդի Արվեստի Թանգարաններ, Արթուր Մ. Սաքլերի թանգարան, ԱՄՆ, պահետսյին համար - 1995.1124.C, չափսերը - 9.5 X 10.3 սմ:

Նկար 7. Վիրավորված ցուլերին հետապնդող հետևակ նետաձիգ զինվորներով որսի հազվագյուտ պատկերները Ուրարտական բրոնզե գոտու բեկորից:
Աղբյուր. Treasure Gate Gallery, Հոլանդիա, մասնավոր հավաքածուից:

Նկար 8. Առյուծի որպես կանգնային հարթակի վրա կանգնած դիցության պատկերը Ուրարտական բրոնզե գոտու վրայից:
Աղբյուր. Wartke, Ralf-Bernhard; Urartu Das Reich Am Ararat; Verlag Philipp Von Zabern Mainz Am Rhein 1993, ISBN: 3-8053-1483-3, էջ 125, ֆոտո 62.



Նկար 9. Ուրարտական բրոնզե գոտիների պատկերագրային տեսարաններից արտանկարված առյուծների կերպարների զանազան տիպեր:

Աղբյուր. Çavuşoğlu, Rafet; Urartian Belts – Rezan Has Museum Urartian Belt Collection; Rezan Has Museum, Istanbul 2014, էջ 171, նկարներ 1-19:



Նկար 10. Ուրարտական բրոնզե գոտիների պատկերագրային տեսարաններից արտանկարված ցուլերի կերպարների զանազան տիպեր:

Աղբյուր. Çavuşoğlu, Rafet; Urartian Belts – Rezan Has Museum Urartian Belt Collection; Rezan Has Museum, Istanbul 2014, էջ 172, նկարներ 1-15:



Նկար 11. Ուրարտական բրոնզե գոտիների պատկերագրային տեսարաններից արտանկարված առյուծների և ցուլերի համադրված կերպարների զանազան տիպեր:

Աղբյուր. Çavuşoğlu, Rafet; Urartian Belts – Rezan Has Museum Urartian Belt Collection; Rezan Has Museum, Istanbul 2014, էջ 173, նկարներ 1-3: